6775

Սկրտիչ Կրթեր"

891.99
Ղ-91

Ղ-1927

ԱԳԱՐՏԻՉ ԱՐՄԵՆ

519

ՅԵՐԿԱԹԱՎՈՐՎՈՂ ՅԵՐԿՐԻ ՅԵՐԳԵՐ

2011

328

891.99
Ա-97

ՅԵՐԵՎԱՆ — 1927

2:20 09

891.99
Ա-91
սպ.

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆ

1001
1065

ՅԵՐԿԱԹԱՎՈՐՎՈՂ ՅԵՐԿՐԻ ՅԵՐԳԵՐ

ՀԱՅԿ Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Հ.Հ. Публичная Библиотека
7/XI 1922
имени Мясникян
Ա. ՄՅԱՍՆԻ ԱՆՎԱՆ

519

ՅԵՐԵՎԱՆ — 1927

13859

Գրառեպվար 89 բ. Հ. 487 Տիրաժ 500

Պետհրատի յերկրորդ տպարան Յերեվանում—238

ՅԵՐԿԱԹԱՎՈՐՎՈՂ ՅԵՐԿՐԻ ՅԵՐԳԵՐ

ՎՈՂՋՈՒԹՅՈՒՆ

Վողջո՛ւյն, վողջո՛ւյն յերկաթ գալիք,
Վոր յելնում ես այս լեռներում,
Դաշտի վրա յեվ ամենուր ...։

Վողջո՛ւյն, վողջո՛ւյն, վոր պիտի գաս,
Մեր յերազած յերկաթ գալիք,
Այս փոթորկի վերջին ալիք...։

Վոր պիտի գաս այս դաշտերով,
Պիտի մտնես հյուղերը մառ,—
Բեզ իմ սրտի վողջույնը վառ...։

ԻՐԻԿՈՒՆ

Հողաբլուր գյուղի վրա
Իջավ խավար իրիկուն...։

Լույս ե ցայտում հեռու տեղից
Ու լարերի միջով հոսում,
Բիչ ե դեռ այդ լույսը դեղին,
Ու դեռ խավարն ե այդ փոսում։

Հազիվ ամեն կտուրի տակ
Լույսի մի շող, նավթի լապտեր,
Դրսում մութն ե փռվել համակ
Ու յերկինքն ե դժկամ կապտել։

Դեռ վորքա՛ն լույս պիտի հորդե
Դեպի խուղերն այդ հեռակա,
Ուր ճրագի թույլ բոցն ե դեռ,
Ուր խավարն ե դեռ տիրակալ։

Հողաբլուր գյուղի վրա
Իջավ խավար իրիկուն...։

ՑԵՐԱՋ ՉՐԱՆՑՔԻ ՄԱՍԻՆ

Անցնում եր դաշտերով հին սելը,
Դաշտերը յերաշտից դեղին դարձած,
Սայլի ճռինչը մորմո՛ք եր լսելի,
Սայլի վրա նա բարացած արձան։

Սովալլուկ գեղջուկի նիհար թեվերի պես,
Հասկերը մուրացող ձեռքեր դարձած,
Զգվեցին, սողացին սայլի չորս կողմերից
Յեվ դեպի նա բարձրացան։

Ու հանկարծ մտերիմ մի մեղեդու պես,
Զրանցքի կարկաչով բռնվեց դաշտն արձակ,
Ու հանկարծ թվաց թե կանաչեց գետինը,
Հասկերը հորձանքով բարձրացան. .։

ԼՈՒՍԱՏՈՆ

Հիդրոկայանն և շառաչում անընդհատ,
Կյանք են առել մեր յերեկվա հույսերը,
Հե՜յ, խավարի՛ մեջ խարխափող գյուղակներ՝
Շուտ վառեցե՛ք լույսերը։
Լույսերը մութի մեջ,
Մութը զոր թող դառնա,
Իրիկվա մութի դեմ
Հո՛ւր վառվի թող վառման։

Ելեկտրոլարեր կան ամեն կողմ, ամենուր,
Ցանցել են խիտ, հեռագրասյան ուսերը,
Վորքան դժնի ու չարահուշ և խավարը,
Դեհ վառեցե՛ք լույսերը։
Գիշերվա մութի մեջ
Արեվներ թող բոցվեն,
Խավարի թեվի դեմ
Մենք պայքար ենք բացել։

Խավարն իսկույն կլանում և ամեն ինչ,
Յերբ բեկվում և արեգակի սուսերը,
Հե՜յ, գյուղակները հեռու, մոտիկ կուչ յեկած,
Յելեք, վառեք լույսերը։

Լույսերը մութի՛ մեջ,
Լույս կյանքը թող կեցցե,
Դեհ յելեք գյուղակներ,
Արեվներ վառեցեք։

ԱՐՇԱԼՈՒՅՍ

Ո, ելեկտրակա՛ն յեկող առավոտ,
Վոր գալիս յես յերկաթե քայլով
Ու յերկաթի պես ծանրանիստ,
Վոր վրդովում ես քո փայլով
Այս յերկրի գյուղական հանգիստը,—
Ո, ելեկտրակա՛ն յեկող առավոտ...։

Բացվում ես վերջալույսից հետո,
Յերբ մութն ե իջնում կապտասեվ,
Յերբ մայթերը մարդկանցով հորդուն
Սկսում են փողոցներն ակոսել,—
Դու լույսդ ես անխնա հորդում,
Բացվում ես վերջալույսից հետո...։

Մեքենանե՛ր դուք յեղբայրական,
Ելեկտրական դուք մեքենաներ,
Վոր յեկել եք հեռու յերկրից,
Ու բերել եք լուսե նվեր
Մեր մթին յեվ անլույս յերկրին,—
Վողջունե՛ք ձեզ յեղբայրական ..։

ՀՈՐԻԶՈՆԻ ՑԵՏԵՎ

Հորիզոնի յետե՜վ,
Հորիզոնի յետե՜վ...
Հեռաստանե՛ր անծանոթ
Հորիզոնի յետե՜վ,
Հորիզոնի յետե՜վ...։

Վերջալույսի ժամի՜ն,
Վերջալույսի ժամի՜ն...
Արյունախառ այդ վոսկին
Վերջալույսի ժամի՜ն,
Վերջալույսի ժամի՜ն...։

Ո՞վ է յերգում, յերկի՞ր,
Հորիզոնի յետեվ...
Գալիք որվա մասին,
Վերջալույսի ժամին,
Ո՞վ է յերգում, յերկի՞ր...։

Հորիզոնի յետե՞վ,
Հորիզոնի յետե՞վ...
Յեկվորներ կան ծանոթ
Հորիզոնի յետե՞վ,
Հորիզոնի յետե՞վ...։

ՍԱՂԱՐԹՈ՛ՒՆ ԻՄ ՅԵՐԿԻՐ

Սաղարթո՛ւն իմ յերկիր,
Գալիքի դեմ հաշտ,
Լցված ափսե մրգի,
Արարատյան դաշտ...։

Յերակներովդ հիմա,
Վորպես յերկաթ հալած,
Անցնում ենք մենք անհա
Ոծագալար։

Դեռ յերկաթ չի հագել
Հողի ամեն մասնիկ,
Վոր որերի վազքից
Յետ չմնա, հասնի։

Մենք բերում ենք մեզ հետ
Յերկաթեղեն զրահ,
Հագի՛ր իսկույնեվեթ,
Առա՛ջ ճնի վրա։

Սաղարթո՛ւն իմ յերկիր,
Գալիքի դեմ հաշտ,
Լցված ափսե մրգի,
Արարատյան դաշտ...։

ՍԵՐ

Այս այգիներն անթով,
Դուք սիրում եք խանդով,
Յեվ սիրում եք գյուղական սիրով ծեռ վառ,
Այս մրգերը հասուն,
Յեվ առուները հոսուն,
Յեվ ծաղիկներն այս, յեվ ծառ...։

Յես սիրում եմ նրանց,
Ատելությամբ անանց,
Ծերպերին այդ քսենոֆոնյան,
Մինչեվ վոր մի որ,
Այս յերկրում դարավոր,
Բարձրանա յերկաթե սիմֆոնիան...։

Մինչեվ գա ժամանակ,
Վոր ամեն ծառի տակ
Մի յերկաթ մեքենա դղրդա,
Ու դաշտերում անթով,
Տրակտորները խանդով,
Հողեղեն յերկրին մի նոր շունչ տան...։

Միայն այն ժամանակ,
Նստած մի ծառի տակ,
Յես հանգիստ կառնեմ իմ հոգնությունից,
Ու մրգերը հասուն,
Յեվ առուները հոսուն,
Մետաղի ժպիտով կժպտան ինձ...։

ՏՈՒՖԸ

Ինչո՞ւ դեռ գուր քնած են հողերի տակ
Տուֆաբարերը։
Տուֆաբարերը սեվ, գիշերվա նման,
Տուֆաբարերը ցերեկվա պես դեղին։
— Տուֆը հողի՛ տակ,
Տուֆը հողի՛ տակ,
Ովքե՞ր են թակթակում այնտեղ...։

— Բլունգո՛վ զինված,
Փորիչո՛վ զինված,
Քանդում ենք, բանդում ենք արդեն...։

Յեվ ելի մի նոր խումբ բանվորական,
Գնում է անա։

— Գնում ենք բլունգով զինված,
Ձեռքերիս բահ կա ու փորիչ,
Մենք տուֆաբար ենք հանելու
Յերկրի փորից։
Հողը ծանր նստվածքով իր հաստ,
Ճնշում է ու ծածկում նրան,
Ձգետք է մի քիչ հող իսկ թողնել
Տուֆաքարի վրա։
Կքանդենք այդ հանքը, կքանդենք,
Ու վաղը՝ այս յերկրում հողեղեն՝
Կկանգնեն տուֆաշեն շենքերը,
Տուֆաշեն փողոցները կկանգնեն։
Տուֆե՛ կկանգնի այս յերկիրը,
Վոր հողեղեն եր յերեկ,
Կկանգնի վառ ու պսպղուն,
Վորպես ցերեկ...։

Ել վոչինչ. պայթյունի միայն հինչ,
Ու մեկ ել բլունգի թակոց,
Իսկ տուֆը գալարվում եր հրեվանքից
Գետնի տակով..։

— Տուֆը հողի՛ տակ,
Տուֆը հողի՛ տակ,
Ովքե՞ր են թակթակում այնտեղ...։

— Բլունգո՛վ զինված,
Փորիչո՛վ զինված,
Քանդում ենք, բանդում ենք արդեն...։

ԼՈՒՅՍԵՐ

Միայն լուսինն է դժգույն փայլում,
Նա յե յերկնի վրա քայլում։

Լուսնի լույսով, կես գիշերին,
Գետառ-չայի խշշոցը մեղմ,

Դուրս են գալիս ջրի տակից
Հարյուրավոր փոքրիկ գորտեր։
Կռա՛կ կռա՛կ գիշերն ի բուն,
Գետակի մեջ, գետակից դուրս,
Յեվ լուսինն է միայն փայլում,
Նա յե յերկնի վրա քայլում։

Գետառ-չայի ափի վրա
Խիճե պատեր, փոքրիկ դռներ,
Պատերը գորշ, անպատուհան,
Մութ՝ պատից դուրս ու պատից ներս։
Գաճաճ պատեր կարճ ու թզուկ,
Գետառ-չայը լիզող լեզու,
Յեվ լուսինն է միայն փայլում։
Նա յե պատի վրա քայլում։

Հեռու հեռվում, քաղաքից վեր,
Հեռու հեռվում յերկնի վրա,
Փոշիացած լույսի կույտեր
Յերեվում են հեռվից անա։
Այնտեղ աստղե՞ր են փշրվել,
Մո՞ւթն է արդյոք լույսով ջրվել,
Թե՞ լուսինն է դժգույն փայլում,
Նա յե յերկնի վրա քայլում։

Ո՛վ վոչ, լույսի կույտի ներքեվ
Փողոցներ կան վառ, լուսավոր,
Փողոցների շողքն է ընկել
Յերկնի վրա մթին ու խոր։
Այդ փոշու տակ լույսի ովկիան,
Այդ փոշու տակ խլրտուն կյանք,
Զո՛ւր է լուսինն այդպես փայլում,
Ու քաղաքի վրա քայլում։

Տե՛ս, ծգված է յերկաթալար,
Փողոցներով մութ, ամայի,
Նա ծգվում է յերկար, յերկար,
Նա հասնում է Գետառ-չային։
Լարի շարքով հետզհետե
Վառվում են վառ լապտերներ,
Լապտերներ են արդեն փայլում,
Լույսն է մթան վրա քայլում։

Յետ է քաշվում խավարն ահից,
Գորտերն արագ ջուրն են ընկնում,
Մի պատի տակ շունն է վախից
Տխուր վոռնում, տխուր վնգում։
Ծավալվում են լույսերն արագ,
Դեպի հեռու, դեպի առաջ,
Լույսն է, լույսն է արդեն փայլում,
Նա յէ սթան վրա բայլում։

Գետառ-չայի ափի շարքով,
Տնակներում անլույս ու մութ,
Թլրտում են խուլ տագնապով,
Բաց են անում դուռ, լուսամուտ։
— Յելեե տեսեք, գիշեր է կես,
Լույսի հեղեղ ենք բերել ձեզ,
Ձեր դռան մոտ լույս է փայլում,
Յեվ ավելի՛ հեռուն բայլում...։

ԳԱՄԱՂԱՅԸ

Իմ յերկրի բամահաբ դաշտերից մեկում
Կանգնել է մի հին բամաղաց,
Բանդաղ մի բամի յե հեռուից փչում,
Վոր ներսում մեկն իր աղունն աղա։
Անփետուր ու խանձված, խունացած ու սեվ,
Կտուրին դառնում են չորս թեվ,
Անշտապ դառնում են, ծանծրույթով դառնում են,
Յեվ արեվն է իջնում սարի յետեվ...։

Իսկ ներսում մխացող ճրագն է նվաղում
Լույսով իր դանդաղ, արդեն մարող,
Գյուղական իմ յերկրի լղարիկ աղունը
Այնտեղ աղում են յերկու բարով։
Գյուղերի խավարն է կտուրին լուռ նստել,
Այնտեղ դառնում են հոգնած չորս թեվ,
Անշտապ դառնում են, ծանծրույթով դառնում են,
Յեվ արեվն է իջնում սարի յետեվ...։

Վերեվում թեվերն են թպրտում անյերիզ,
Դանդաղ դառնում են ու հեզասահ,
Խիճաբար ճամբեքով ջրաղաց է գալիս

Աղունով բարձած մի յեզասայլ։
Այն՝ հին մի թռչուն է, հոգվերից ծվարվել,
Դառնում է խանձված ու քառաթեվ,
Անշտապ դառնում է, ծանծրույթով դառնում է,
Յեվ արեվն է իջնում սարի յետեվ...։

Գյուղաստան իմ յերկրի պրոպելլերն այդ հոգնած,
Վոր թռչել է ուզում, բայց իր տեղն է միշտ,
Իմ յերկրի հնորյա մեքենան է նա,
Դանդաղասահ ու դառնավիշտ։
Յեվ ելի դառնում է մեքենան այդ տծեվ,
Հավիտենական ու ծանրաթեվ,
Անշտապ դառնում է, ծանծրույթով դառնում է,
Յեվ արեվն է իջնում սարի յետեվ...։

Դառնում են դեղնահակ այդ դաշտում ցրտամահ
Իր անոգ թեվերը թույլ ու յերեր,
Բնաջինջ անտառի մերկացած ծառ է նա,
Ճյուղերը ջարդված յեվ անտերեվ։

Վորքան ել դեռ այսոր իր սայլով հնամյա
Այստեղ գա գյուղացի մի անանուն,
Միեվնույնն է, ելի նա ամայի կմնա,
Թռչուններն իր ներսում կդնեն բուն։

Իսկ վերում անոգուտ կդառնան դեռ ելի
Թեվերը խարխլված ու բայբայված,
Յեղեգնե կտուրը կպոկե քամին,
Տախտակները կընկնեն, կթափվեն ցած։

Մի գիշեր կպոկվի մեկն իր չորս թեվերից,
Վար կընկնի գետնին, կմնա անթաղ,
Բայց ներսում քարաշեն մեքենան դեռ ելի
Կդառնա պտույտով թույլ ու դանդաղ։

Կպոկվի յերկրորդը, յերկուսը կմնան,
Կդառնան յերկուսը ոդում իզուր,
Ժանգոտվող յերկաթե առանցքին դեռ հենած,
Վորպես պտուտակ իմաստազուրկ։

Կմնա մի թեվ, կդառնա այդ թեվն ել,
Կորորվի այդ թեվն ել ինքն իր վրա,
Յերբ նորից սարերից արեվը վար նայե,
Այդ թեվը նույնպես ել չի մնա։

Կկախվի ոդի մեջ առանցքը ժանգահար,
Վորպես անպարան կախաղան,
Նրա հետ կխաղա քամին զանգահար,
Կմեռնի նա հաշտ ու խաղաղ։

Ծղրիդները կերգեն միալար եռալով
Ջրաղացի կյանքի ու մահվան մասին,
Յեվ ներսում հարդեղեն իրենց բունն հյուսելով,
Առնետները կապրեն միասին։

Ու մինչդեռ կմեռնի բամաղացն այդ անթեվ,
Վոր ապրում եր յերկրիս շնչին նստած,
Անընդհատ շարքերով յերկրից ներս կմտնեն
Ուրի՛շ մեքենաներ վտահ.

Կմտնեն յերկիրն այս, հաստատուն քայլերով
Պողպատե զութանը, յերկաթե ձին,
Յեվ գլխից գյուղական գլխարկը հանելով
Կողջունեն նրանց մուտքը գյուղացին...։

ԳՅՈՒՂԱՍՏԱՆ

— Այն ո՞վ է դռները ուժգին թակում.
— Այն ո՞վ է դռները վախով փակում.
— Այն ո՞վ է մեռնում փոքրիկ բակում...

Հողե յերկիրն այս լեռնատեղի,
Գյուղեր անթիվ ու ցանուցիր,
Դաշտերով փռված շունչը նրանց,
Համատարած անմահ մի ծանծիր...։
Հովիտներ չոր, անհորիզոն,
Ամենուր բարձր, խեղդող լեռներ,
Վոր շուրջը կանգնած այդ դաշտերի՝
Ճանապարհներն են փակել, բռնել...

Այդ պատերը ժանտ, ու մերկ, ու լերկ,
Վոր բռնել են դաշտն ամենուրեք,
Յեվ թողել նրան իրենց ստվերի տակ,
Վորպես փոքրիկ, փոքրիկ մի բակ։

— Այն ո՞վ է մեռնում փոքրիկ բակում...։

Այդ բակում բակերը գյուղական,
Սայլեր յերկանիվ, պատնիվեր կանգնած,
Արորներ ջարդված, պապենական՝
Փայլը յերկաթե խոփի՝ հանգած։
Այնտեղ մեծ շունն է հովվական,
Անգործությունից թույլ հորանջում,
Պատերի տակ փոքրիկ գառներ,
Կիսախուփ հայացքով նայում են, ննջում։

— Այն ո՞վ է մեռնում փոքրիկ բակում...։

Հավերը իմաստով մի խորախորհուրդ,
Փնտրտումով հավիտենական,
Նրանց թափառումը ամենուր
Յեվ աքաղաղը նրանց տիրակալ։
Վոչխարներ ծանր ու բրդաթավալ,
Հայացքով անմիտ ու վորոճումով,
Ցուպը հովվական, հաստագլուխ,
Ու հորթը լղարիկ, ու յեզ, ու կով...։

— Այն ո՞վ է մեռնում փոքրիկ բակում...։

— Այն ո՞վ է մեռնում փոքրիկ բակում.
— Այն ո՞վ է դռները վախով փակում.
— Այն ո՞վ է դռները ուժգին թակում...։

Ահա փափախ մի մոխրագույն,
Նրա տակ դեմքը՝ հողի մասնիկ,
Աչքերը ծխապատ թոնիր գյուղի,
Գեղջուկ իրանը ահավասիկ։
Գյուղական զգեստը վոչխարի բրդից,
Վոտնամաններ կաշիից յեզան,
Քամահար մարմինը ճաքճաքոտած,
Ու խորշոմները ճակտի հազար։

— Այն ո՞վ է դռները վախով փակում...։

Ուղեղում վախ մի հավերժական,
Ու հողի, ու ջրի, ու յերկնքի դեմ,
Կայծակի հանդեպ ու կարկուտի դեմ
Հնազանդ դեմքը անոգնական։
Յետեվում հյուղը իր խճաշեն,
Շինված խիճից ընչին ու մանր,
Կտուրից յելնող ծուխը դանդաղ,
Յեվ գյուղական, յեվ գյուղի պես ծանր։

— Այն ո՞վ է դռները վախով փակում...։

— Այն ով է դռները վախով փակում.
— Այն ո՞վ է մեռնում փոքրիկ բակում.
— Այն ո՞վ է դռները ուժգին թակում...։

Թակում են դռները լուռ այս յերկրի,
Ու դռներից դուրս յեվ ծայներ յեվ յերգ,
Թակում է դռները թակով կրկին,
Անսասան ինչվոր յեվ ուժգին ձեռք։
Դռների յետեվից ծայներ, ծայներ,
Նվագի նման քաղցրանվագ,
Ու փակ դռներից ահա այս կողմ
Հասնում են ծայներ խուլ ու նվազ։

— Այն ո՞վ է դռները ուժգին թակում...։

Համատարած յերգով մի խոր,
Դռների յետեվ անմահ ժխոր,
Հազար ձայների յերգը խմբովին,
Թակոցը տակտով, կրկին, կրկին...
Այդ աղմուկի մեջ լսվում է դղրդ,
Դղրդը շարժվող անիվների,
Տակտը գնացքի արագասահ,
Քերվող խուզոցը զույգ ռելսերի։

— Այն ո՞վ է դռները ուժգին թակում...։

Այդ աղմուկի մեջ շչակներ անթիվ,
Մուրճի հարվածներ տեղատարափ,
Փնչոցն անցնող ոթոների,
Ոգանավերի շաչը արագ։
Այդ աղմուկի մեջ յերկաթ յերգեր,
Այդ աղմուկի մեջ թակող ձեռքեր,

Բառերը յերգերի, վառ ու մարտական,
Յերգերը հզոր հազարականչ։

— Այն ո՞վ է դռները ուժգին թակում...։

Հնչյուններ մետաղե ու մետաղի,
Ճողփյունը լայնածիր ովկիանների,
Լեռնակույտերի պայթյուն հանկարծ,
Զույգ ռելսեր նրանց կրծքին ընկած։

— Այն ո՞վ է դռները ուժգին թակում. .։

Յեղբայրական կանչ դռան յետեվից,
Զրնգոց պողպատե զույգ թեվերի։

— Այն ո՞վ է դռները ուժգին թակում...։

Կանչը անողոք ու վճռական։

— Այն ո՞վ է դռները ուժգին թակում ..։

Թակոցով պինդ ու հազարականչ,

— Այն ո՞վ է դռները ուժգին թակում....։

— Այն ո՞վ է դռները ուժգին թակում.
— Այն ո՞վ է դռները ուժգին թակում.
— Այն ո՞վ է դռները ուժգին թակում...։

ՌԻԹՄԻ ԾՆՈՒՆԴԸ

Մեր գյուղաստան յերկրում ռիթմը ծնվեց,
Մայթերի վրա յեվ ամենուր։

Ահա քաղաքը գաճաճ ու ցրտահար,
Հողե տանիքները տափակ
Ու պատերը ցեխաշեն,
Փողոցները փոշիածածկ,
Զարդված,
Ահա շոսսեն,
Ահա փողոցները սարսափահար։
Իրիկվա կիսախավարում խարխափող այդ փողոցները,
Միորինակ, ամայի փողոցները,
Փողոցները...։

Փողոցները՝
Վոր գաճաճ շենքերի շարքերով սեղմված,
Քաղաքն յեն յերիզում վոլորապտույտ,

Փողոցները կիսաբանդ,
Կիսաշեն,
Թաց,
Փողոցներն ու տների կույտը...։
Ահա նրանք,
Յերկրաշարժից գոյացած ճեղքերի նման,
Հողաշեն կողերով ու մայթերով ջարդոտված,
Ահա սալահատակը բանդված,
Ու ցեխը սալահատակների վրա։

Ահա հեռվից սահեց սարսափահար մի կառք,
Յերկու մոլոր մարդիկ ամայի փողոցում.
Դիմացի փողոցում
Բամին է կոծում,
Ալեկոծում ցուրտ փողոցների տեսքը զորշաբար։

Վառարաններից յելնող ծուխը այս նվազուն,
Վոր փռվում է հողե տանիքների վրա,
Ու քաղաքի վրա՝
Աշնանային որվա ամպամշուշ մի ցուրտ։

Ահա մերկ դաշտերը իրիկնային մուժում,
Վոր սողալով հասած պաղ քաղաքին այս հին,
Փչում են ցուրտ շնչով այս քաղաքի վրա,
Նայում են սառ ու չար,
Ու քաղաքն այս աշնան,
Ահաբեկված դողով դեռ նայում է նրանց։

Գյուղ է յերկիրը իմ հնորյա,
Ծնվող ռիթմը մայթերի վրա։

Ու ռիթմը ծնվեց այդ հին փողոցներում,
Մայթերի վրա յեվ ամենուր...։

Հեռու մի փողոցում ինչվոր կառք յերևվաց,
Մի ավտոբուս անցավ,
Սուր սուլեց մի շչակ,
Հեռու կայարանում շոգեգնացքը ճչաց,
Ու քաղաքի վրա արևը հոսեց ցած։

Գյուղ է յերկիրը իմ հնորյա,
Ծնվող ռիթմը մայթերի վրա։

Մարդիկ անցան արագ,
Ուրիշ մարդիկ անցան,

Դղրդացին կառքեր,
Ավտոն վազեց վերից,
Երի շչաց ուժին մի լիաթոք շչակ,
Ու մայթը դղրդաց անցուրդարձի բայլքից։

Գյուղ է յերկիրը իմ հնորյա,
Ծնվող ռիթմը մայթերի վրա։

Մի ֆաբրիկա ծխաց,
Մաքրվեց մի փողոց,
Մի տեղ մայթը շինվեց ու ցեխը չորացավ,
Ելեկտրական կրակներ պլպլացին մեկ-մեկ,
Ու փողոցով կրկին մարդիկ, կառքեր անցան...։

Յեվ հանկարծ հեվը,
Ու զա՛րկ,
Դղիրդ,
Ռիթմ ու վորոտ,
Պրծավ մի յեռուզեռ, տենդահար ու տենդոտ։—

Գնում են կառքերը,
Գալիս է ոթոն,
Վազում են մայթերը,
Ցուցափեղկեր ու տուն։

Ճչում են շչակները,
Կանչում են գնացքները,
Գնում են փողոցները,
Գալիս են փողոցները
Բարձրանում են,
Իջնում են,
Դառնում է քաղաքը տենդոտ,
Տենդահար,
Հազարավոր առանցքների վրա։

Ռիթմը յելնում է մայթերին,
Բարձրանում է պատերն ի վեր,
Կանգնում են նորանոր շենքերը,
Կանգնում են նորանոր փողոցներ։

Ծնվում է ռիթմը ու խելակորույս
Ֆռռում է շենքերի, մայթերի վրա,
Յեվ ելեկտրական հորդուն մի լույս
Հորդում է առատ ու տենդահար։

1001/1065

Հայրենի գրադարան Ա. Սեմսարյան

Գյուղե յերկիրը իմ հնոցյա,
Ծնվող ռիթմը մայթերի վրա։

Ահա դառնում ե հազարաանցք,
Ահա դառնում ե, դառնում ֆոտոն,
Ու ռիթմն ե ծնվում քաղաքի վրա,
Հողեղեն կյանքն ե ահա մեռնում։

Փլվում ե ցեխաշեն մի գաճաճ խրճիթ,
Ու նրա տակից հազարագույն՝
Բարձրանում ե բարձր, հպարտ, խրոխտ,
Քսանահարկ մի անծայր տուն...։

Ո՛, գյուղե յերկի՛ր իմ հնոցյա,
Ո՛, ծնվող ռիթմ մայթերի վրա...։

ՉՐԱՆՑՔՆԵՐԻ ՅԵՐԿԱԹԵ ՅԵՐԳԸ

Ո՛, դաշտեղեն չլո՛ւտ յերկիր,
Ո, դաշտեղեն չլուտ յերկիր,
Ո, դաշտեղեն չլուտ յերկիր...։

Այս յերկրում հոսող ջրանցքները,
Վոր գալիս են ժայռե հուներով,
Բերում են չլուտ իմ այս յերկրին
Յերկաթի բաղձանք ու կորով։
Խոխոջանք ու խոխոջանքի տոն ե այսոր
Յերկրում մեր այս տափարակ,
Կարկաչուն կարկաչում են ջրանցքները
Հողերի մեջ մեր պապակ։

Ո՛, դաշտեղեն չլո՛ւտ յերկիր...։

Վաղն այս կապտերիզ ջրանցքների ափերին
Կփռվի յերկիրը մեր նորաբաղձ,
Այս չլուտ գետափներին, այս չլուտ բարափներին,
Հյուր կգա յերկիր մի նորաբարձր։
Ու կբարձրանան ջրանցքների ափերին
Յերկաթավորված գյուղերը մեր,
Հնադարյան այս խավար գիշերներին
Լուսեղեն գալիքն ե գալիս նվեր։

Ո՛, դաշտեղեն չլո՛ւտ յերկիր...։

Յեվ այսոր, վոր վոլորուն իրենց հուներով
Հոսող այս ջրանցքներն են կապտագունել,

Նրանց ջրերի միջից յես պայծառ տեսնում եմ
Յերկրիս բաձրունքները գունեղ։
Նրանց ջրերի միջից վեր են յելնում
Ու կանգնում են դեմս վորոշակի,
Յերկաթված յերկիրը մեր վաղվա գալիք,
Ու վաղվա քաղաքները մեր ահագին։

Ո՛ դաշտեղեն չլո՛ւտ յերկիր...։

Յելնում ե իմ դեմ մի հաղթ յերկիր
Այս ջրանցքներից հղիացած,
Գյուղաստան յերկրիս հողեղեն բարձունքները
Անզորորեն թափվում են ցած։
Յեվ ելի խոխոջուն խոխոջում են ջրանցքները,
Յեվ ելի նրանց ջրերն են կապտագունել,
Տեսնում եմ նրանց մեջ՝ յերկաթված իմ յերկիրը,
Ու պսպղուն բախտն իր գունեղ։

Ո՛, դաշտեղեն չլո՛ւտ յերկիր,
Ո, դաշտեղեն չլուտ յերկիր,
Ո, դաշտեղեն չլուտ յերկիր...։

ԿԱՅԱՐԱՆԻՑ ՇՉԱԿՆԵՐԻ ՁԱՅՆԸ

Գալիս ե հեռու կայարանից
Շչակների ձայնը...։

Այս փոքրիկ քաղաքը գյուղաստանյան,
Յեվ հողե կողերով գյուղերը այն,
Լսում են հեռու կայարանից յեկող
Շչակների ձայնը...։

Այդ արդյոք նա չե՞ այդպես ճչում,
Վոր պիտի գար,
Պիտի գար անշուշտ,
Խավարի միջից դուրս հանելու
Այս փոքրիկ քաղաքը,
Գյուղակներն այն,
Ու յերկիրս կիսաքաղց ու կիսակուշտ։
Յեվ ահա լիաթոք ճչում ե ելի,
Այդ մեր գալիքն ե,
Այդ այն ե,
Այն ե։..

Լսվում է հեռու կայարանից
Շչակների վողջունող ձայնը...։

Այսոր յեկել է նա կայարան,
Վաղը կիջնի վար, կիջնի քաղաք,
Կպոռթկա իմ լուռ յերկրի վրա
Քաղաքների յերկաթաշունչ աղաղակը։

Վաղը կիջնի վար, կիջնի քաղաք,
Կզնգա շինվող մայթերի վրա,
Կփռվի դաշտերով, սարով, ձորով.
Ու կմտնի գյուղ ու ավան,
Կլցնի ճիչով յերկաթական,
Կլցնի գյուղերը լույս ու նորով։

Յես այդ զգում եմ արդեն իմ ներսում,
Յես այդ զգում եմ իմ արյան մեջ,
Անանջատ մասն է նա իմ արյան։

Գալիս է հեռու կայարանից
Շչակների ձայնը...։

Գյուղերը ծխում են դեռ թոնրաբերան,
Այնտեղ նախիրն է միայն բառաչում,
Ամպախառիվ յերեկոյան,
Գյուղի վրա,
Հովվական շներն են տխուր հաչում։
Մթնում է որը, նախիրն է դառնում,
Լցնում է ախոռներ, գոմ ու մարագ,
Բայց ահա,
Գյուղը,
Գյուղը հայացքը ո՞ւր է հառում,
Թակում են քունքերը տենդոտ, արագ։
Դարերից ի վեր կո՛ւյր է իմ յերկիր,
Փաթաթված գիշերվա աղջամուղջում,
Վոր այնպես կարոտ ես յերկաթի յերգի,
Վոր չես լսել դեռ յերկաթի վողջույնը,—
Այդ նա յե կանգնել լեռան վրա
Ու յերկաթալար ձեռքը մեկնած՝
Ելեկտրական կրակ է ցրում
Գյուղերի վրա մութ ու հոգնած։

Առաջին անգամ լուսնի ներքո,

Խավարամած այս ձորակում,
Վառվում են լույսեր հրե յերգով,
Իջնում է վառման, նոր իրիկուն։

Առաջին անգամ այս խավար ձորում,
Լեռնակողի ձորում այս հին,
Խավարի կուրծքն է անընդհատ փորում,
Նա,—
Ելեկտրականը,
Ամեհին։

Շատ շուտով կիջնի կայարանից
Ու դեպի գյուղ կքայլե այն ել,
Փռվո՛ւմ են արդեն այս յերկրի վրա
Բազմաթիվ շչակների ձայներ...։

ՔԱՂԱՔԸ ՖԻԼՄԻ ՎՐԱ

Քաղաքը...։

Նա ձգվել է ահագին իր հասակով հաղթական,
Իր շենքերով բազմահարկ ու բազմաձեվ,
Վորոնց շարքից դեպի յերկինք են ցցվել
Թե շենքերի տանիքները բարձրաբերձ,
Թե ֆաբրիկի ծխահաններն աղյուսե։

Ահա բացվել են նրանք,
Փողոցները հազարաձիր ու անծայր,
Յերթի առաջ բազմահոսանք հորձանքի,
Ու փողոցներն այդ հսկա,
Այդ կանալներն ահագին,
Տարածվել են մարդաշատ ու լայնաձիր
Մինչ ծայրերը քաղաքի,
Ու ցանցել են նրա մարմինը բարե,
Փայտաշեն ու յերկաթի։

Ինչվոր մի շենք հրդեհվեց,
Հրշեջ խմբերը անցան
Փայլեցնելով արևվոց սաղավարտները վոսկի,
Նորից ոթռ հրաշեջ,
Նորից ոթռ հրաշեջ,
Յեվ աղմուկի մեջ լուծվեց հինչը իրենց զանգերի։

Կայարանից հեռավոր, սուլեց յերկար մի շչակ,
Ճամբա յելավ այնտեղից շարքը սահող գնացքի,
Նա դուրս պրծավ ռելսերի մանվածապատ բառսից,
Հեռվում ուղին յերևաց
Ու վազվզող ծեվերը հրաժեշտ տվող բաղաբի։

Կաֆիեշանտանը ահա,
Ահա շարքը տների,
Կինոների ռեկլամներ,
Անցնող կառքի դղրդոց,
Տրամվայն անցավ սողոսկով,
Ոթոն վազեց խելագար,
Հեռվում, բարձր յերկնքում մի ոդանավ յերևաց։

Ահա մեծ գետն է հոսում ու լողում են նավակներ,
Ափին մի շենք մարմարե,
Դեսպանատան դրոշակ,
Մի շոգենավ սլացավ, թողեց ծխի մաշվող հետք,
Ջուրը պատռեց սուրալով,
Իսկ կամուրջի վրայից տրամվայն արագ անցկացավ։

Յերկաթացանց կամուրջներ պիրկ փարվել են ափերին,
Ու ներքևից մեղմահոս գետն է հոսում ակամա,
Այն կողմ ինչվոր ցուցանակ,
Տեսքը հեռու պրոսպեկտի,
Պուշչաղների բացատ լայն,
Ու փողոցնե՞ր, փողոցնե՞ր անհամար...։

ՀԱՅ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Публичная Библиотека
Հ.Ս.Խ.Հ. Հ.Ս.Ս.Հ.
7/XI 1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Եջ	Տող	Տպված է	Պիտի լինի
10	13	Յելեգ	Յելեք
16	25	Գյուղ և	Գյուղն
»	34	Գյուղ և	Գյուղն

ԳԻՆԸ ՝ 20 ԿՊԵ.

2013